



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

N \_\_\_\_\_

\_\_\_\_\_2012 թ.

Քաղաքացի Վանիկ Մկրտչյանին  
հասցե՝ ք.Երևան, Հաղթանակ  
թաղամաս, 5-րդ փողոց, 23/2 տուն

Կից ուղարկվում է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների  
կոմիտեի հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 27.03.2012թ. թիվ 11/4  
որոշումը:

Առդիր՝ 2 թերթ:

Հարկային մարմնի գանգատարկման  
հանձնաժողովի նախագահ՝

Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ

«Հ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 11/4

27 մարտի 2012թ.

Քննարկվեց քաղաքացի Վանիկ Մկրտչյանի 20.03.2012թ-ի գանգատը «Հ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 14.03.2012թ. հարկային պարտավորությունների առաջադրման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ թիվ 1410400 վարչական ակտի դեմ:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «Հ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ աշխատակիցների կողմից 13.03.2012թ-ին կազմվել է թիվ 1410400 արձանագրությունը, որի համաձայն քաղաքացի Վանիկ Մկրտչյանը 2012թ. փետրվարի 12-ին էջմիաժնի թռչնաբուծական ֆաբրիկայից ձեռք է բերել 800 հատ հավի ճուտ, վճարելով 150 դրամ մեկ հատի համար և մեկ ամսվա ընթացքում ք.Երևան, գ.Հաղթանակի այգիներում գտնվող սեփական տարածքում պահել և վաճառել է 70 հատ ճուտ 350 դրամ մեկ հատի համար, որի դիմաց ստացել է համախառն եկամուտ 14000 դրամիչափով: Սակայն, այդ գործունեության համար չի ունեցել պետական գրանցում և հարկային տեսչությունում հաշվառում:

Սույն խախտումն առաջացնում է պատասխանատվություն համաձայն «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ կետի դրույթների:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի դրույթներով «Հ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 11-րդ բաժնի պետը 14.03.2012թ-ին ընդունել է հարկային պարտավորությունների առաջադրման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ թիվ 1410400 վարչական ակտը (այսուհետ նաև վարչական ակտ), որով կիրառվել են «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված պատասխանատվության միջոցները: Արդյունքում վարչական ակտով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 260 000 դրամ, այդ թվում՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված տուգանք 200 000 դրամ, «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված տուգանք 60 000 դրամ:

Քաղաքացի Վանիկ Մկրտչյանի գանգատում մասնավորապես նշված է.

Ես ձեռք եմ բերել 800 հատ ձվից նոր դուրս եկած հավի ճուտ, որը մեկ կովի չափ եկամուտ չի բերում, սակայն խնամքի մեծ կարիք ունի: Օրը չուրս անգամ կերակրում եմ վիտամինային տարբեր տեսակի կերերով, տալիս դեղորայք և ապահովում 30 աստիճանի ջերմությամբ: Բերված օրվանից սասկել է մոտ 15-20 տոկոսը: Երկու ամիս և ավել պահելուց հետո տանում ենք գյուղերը և փոխանակում ցորենի, գարու հետ տան թռչուններին կերակրելու համար:

Ես ֆերմեր չեմ և չեմ լսել, որ գյուղացին առաջին անգամ թռչուն պահի և 260 000 դրամ տուգանք մուծի, այն դեպքում, երբ ճուտ պահելը կրում է սեզոնային բնույթ:

Ակտում նշված է, որ 150 դրամով գնում եմ ճուտը և վաճառում 350 դրամով, սակայն հաշվի չի առնվել կատարված ծախսերը և չարչարանքը:

Ես հարկային դաշտ մտնել չեմ խուսափում, սակայն ի վիճակի չեմ 260000 դրամ տուգանք մուծելու, քանի որ չգիտեմ, թե որքան գումար կաշխատեմ:

«Հ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով Վանիկ Մկրտչյանի և վերոգրյալ արձանագրությունը կազմած պաշտոնատար անձանց ներկայացված փաստրկները, ուսումնասիրելով սույն գործին

առնչվող նյութերը և ապացույցները եկավ եզրակացության, որ քննարկվող դեպքում Վանիկ Մկրտչյանը զբաղվել է գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ: Մասնավորապես, ՀՀ Էկոնոմիկայի նախարարի 03.06.2009թ-ի «Հայաստանի Հանրապետության դասակարգիչ հաստատելու մասին» թիվ 372-Ն հրամանով հաստատված տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչը սահմանող աղյուսակի (այսուհետ՝ դասակարգիչ) <01> կետի համաձայն, բուսաբուծություն ու անասնաբուծություն, որսորդություն և հարակից ծառայություններ հատվածը ներառում է գյուղատնտեսության բնագավառում գործունեության երկու հիմնական տեսակները՝ բուսաբուծական մթերքի արտադրությունը (բուսաբուծություն) և անասնաբուծական մթերքի արտադրությունը (անասնաբուծություն): Այն ընդգրկում է օրգանական գյուղատնտեսության ձևերը, գենետիկորեն ձևափոխված մշակաբույսերի աճեցումն ու կենդանիների բուծումը, մշակաբույսերի աճեցումը բաց դաշտերում, փակ տարածքներում կամ ջերմոցներում, օժանդակ ծառայությունների մատուցումը գյուղատնտեսության բնագավառում:

Դասակարգչի <01.4> կետի համաձայն, անասնաբուծությունը ներառում է բոլոր տեսակի կենդանիների, բացառությամբ ջրային կենդանիները, բուծումը:

Դասակարգչի <01.47.0> կետի համաձայն, ընտանի թռչունների բուծումը ներառում է ընտանի թռչունների՝ հավերի, հնդկահավերի, բադերի, սագերի, խայտահավերի բուծումը:

Հարկ է նշել նաև, որ գյուղատնտեսական արտադրանքի, ինչպես նաև դրա իրացումից ստացված եկամտի հարկման կարգ է սահմանված նաև «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքով: Մասնավորապես, «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, հարկվող եկամուտը որոշելիս գյուղատնտեսական արտադրությամբ զբաղված հարկատուների մոտ համախառն եկամուտը նվազեցվում է գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացված եկամտի չափով: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն, գյուղատնտեսական արտադրանք է համարվում կենդանիների կամ բույսերի կենսաբանական վերափոխման միջոցով վերջնական կամ միջանկյալ սպառման համար ստացվող թռչնաբուծության արտադրանքը:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի դրույթներով, որի համաձայն. «Սույն հոդվածը չի կիրառվում՝

բ) անմիջականորեն գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղվող ֆիզիկական անձանց նկատմամբ՝ գործունեության այդ մասով», Հանձնաժողովը գտնում է, որ Վանիկ Մկրտչյանի նկատմամբ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով սահմանված տուգանքը կիրառելի չէ:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

## ո թ ո շ ու մ է՝

Չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՓԵԽ ՕՀՎ 14.03.2012թ. հարկային պարտավորությունների առաջադրման և պարտավանականության միջոցների կիրառման վերաբերյալ թիվ 1410400 վարչական ակտը:

Հանձնաժողովի նախագահ



S.ԲԱՐՍԵԴՅԱՆ